

ՎԻՔԵԼԱԳԻՆՈՒ ՄԻՔԻՆՅԱՆ ԶԱՆՈՒՄԵՆՆԱՅ ՄԻՔԵԼԱՆՈՒԹԻՒՆ

Կ.ՊՈԼՍԻ ՀԱՅԵՐԻ 1728 թ. ՆԱՄԱԿԸ
ԳՐԻԳՈՐ ԵՂԹԱՅԱԿԻՐ ՊԱՏՐԻԱՐԷԻՆ

ՆՈՐԱՅՐ ՊՕՂՈՍԵԱՆ

(Բանասիրական Գիտ. Թեկնածու)

Հայ եկեղեցու և առհասարակ մեր ժողովրդի պատմության մի գեղեցիկ ու ազնիւ դրուագներից է Երուսաղէմի Հայոց **Գրիգոր Եղթայակիր** Պատրիարքի (1715-49) երկաթէ շղթաների պատմութիւնը:

Համառօտ յիշենք. Գրիգոր Շիրուանցի Պատրիարքը 1718 թուականից իր պարանոցին է անցկացրել խաչակիր երկաթէ շղթայ՝ ուխտելով այն չհանել այնքան ժամանակ, քանի դեռ իսպառ չեն մարուել Ս.Յակոբեանց Միաբանութեան և վանքի կուտակուած մեծաքանակ պարտքերը: Երկաթէ շղթան ու խաչերը, այսպիսով, հանդէս են գալիս որպէս Երուսաղէմի Հայոց վանքի պարտքերի վճարման լուծը ստանձնելու խորհրդանիշ: Դրանից էլ առաջացել է Եղթայակիր մականունը:

Գրիգոր Եղթայակրի անձնուէր այդ քայլը լայն արձագանք է ստացել ժամանակի հայ մատենագրութեան մէջ: Բերենք միայն Երուսաղէմի ձեռագրատան 1950 թուահամար Աւետարանի յիշատակարանից մի հատուած. “Որոյ վասն զինքն ի գերութիւն ետ յօժար կամօք, և զխթայագործ երկաթն ի պարանոցի էառ ներ թուաբերութեան տումարիս ՌՃԿԷ, ոչ սակս այլոյ իմիք, այլ միայն առ ի պարտուցս գոհակացս դիգեցմանց հինգ հարիւրից քսակացն թեթեւութեանց, գօտի ի վերայ գօտոյ կապելով էա՞ծ զինքն ի քաղաքէ ի քաղաք, յորոց Աստուծով ոչ սակաւ արդիւնատրութեամբ և ոչ սակաւ զարդուք եւս յիշատակօք հանդերձ էիաս ի Սուրբ Գահս աստուածեան, յորում տիրապետական կառավարութեամբ գետեղեալսն և զեկեալսն ի տարուստ՝ կառավարէ զամենեւնիս ընդ քաղցր բարութ” (1):

Պատրիարքի այդ քայլի շնորհիւ բազմապատկուած են Երուսաղէմին ի նպաստ կատարուող նուիրատութիւնները, որոնց խելամիտ ծախսումների շնորհիւ Երուսաղէմի Հայոց պատրիարքութիւնը թեթեւանում է իր հին



պարտքերի լուծից: Սակայն Գրիգոր Պատրիարքը չի շտապում պարանոցն ազատել երկաթէ շղթաներից՝ ընդհուպ մինչև 1728 թուականը:

Հէնց այս թուականին է լոյս աշխարհ գալիս ներկայացուող նամակը: Կ.Պոլսում գտնուող Կարապետ Բ. Ուլնեցի Կաթողիկոսի (1726-29), Կ.Պոլսի Պատրիարք Յովհաննէս Կոլտ Բաղիշեցու (1715-41), Երուսաղէմի Պատրիարքի ներկայացուցիչ Յովհաննէս Եպս. Հաննայի, հայազգի աշխարհիկ ու հոգեւորական բազմաթիւ երեւելիների (“քահանայք, իշխանք, զանձակաւք, եկեղեցականք և աշխարհականք”, “աստ գտեալ ի հանդերձ միաբան ժողովուրդս”) մասնակցութեամբ կազմուած է մի նամակ՝ ուղղուած Գրիգոր Եղթայակրին, որում բոլորը միահամուռ խնդրում են պարանոցից հանել ծանր լուծը:

Ի՞նչ էր նամակի բուն նպատակակէտը. հեղինակները թախանձագին խնդրանքով դիմում են Եղթայակրին՝ ի վերջոյ պարանոցից հանել երկաթեայ շղթան, քանզի Ս. Աբողը մեծ

չափով ազատուել էր նախկին պարտքերից. “թէն նեղութիւնը դու ես քաշում, սակայն նախատինքն էլ մենք ենք կրում”,- գրում են հեղինակները: Ու քանի որ իր խստամբեր ճգնութեան հետևանքով աստիճանաբար տկարանում էր պատրիարքի առողջութիւնը, այդ պատճառով նոյն գրութեան մէջ յորդորում են ճաշի ժամանակ ջրախառն գինի ըմպել, ըստ առաքելական պատուիրանի, և մարմնին հանգիստ տալ:

Գրիգոր Շոթայակրին գործնական աջակցութիւն ցոյց տալու համար նամակի հետ մէկտեղ հանգանակում և Երուսաղէմ է առաքում մահ հինգ հազար դահեկան գումար, որից հազար դահեկանը նուիրում է կաթողիկոսը: Դրանք բազմակնիք կոնդակով Երուսաղէմ է ուղարկում Յովհաննէս Հաննա վարդապետի միջոցով, որին Շոթայակիրը Թովմաս ու Յակոբ վարդապետների հետ ուղարկել էր Կ. Պոլիս՝ կաթողիկոսից եպիսկոպոսական աստիճան ընդունելու նպատակով:

Յայտնի չէ, թէ ինչպիսին է եղել Գրիգոր Շոթայակրի առաջին արձագանքը Կ. Պոլսի հայերի նամակին: Նման գրութիւններ դեռևս չեն հրապարակուել: “Սիոն” ամսագրի 1971-73 թթ. համարներում հրատարակուել են Գրիգոր Շոթայակիր Պատրիարքի նամակները, որոնցից շատերը հասցեագրուած են իր հոգեկից անձին՝ Կ. Պոլսի Պատրիարք Յովհաննէս Կոլոտին: Այդ նամակների գրեթէ իւրաքանչիւր արտայայտութեան միջից նկատում է իր պատրիարքական աթոռի հանդէպ մեծ նուիրում ու միաժամանակ անհանգստութիւն ու պատասխանատւութեան սրում զգացողութիւն ունեցող մի մարդու էութիւնը, ինչպիսին որ էր Շոթայակիրն իր պաշտօնավարման ողջ ընթացքում: 1724 թուականին, օրինակ, Երուսաղէմում քրիստոնէայ համայնքների հանդէպ ծագած մի անախորժութեան մասին Գրիգոր Շոթայակիրը Յովհաննէս Պատրիարքին գրում է այսպիսի տողերով՝ “աչա՛ցս լոյս, թէ հնար է՝ բան մի արա՛, զի հաշտիցին ընդ միմեանս, և զխաղաղութիւն առնիցեն, զի ասի՝ թէ մեր Հայոց ազգին միայն Ի՛նք քիսա պարտք կայ, և մարդ չի գիտեր, թէ զի՞նչ արասցէ, թէ բողոցու՝ ահա ամենքն կորեան”(2): Սակայն Շոթայակրի նամակնում 1728 թ. Կ. Պոլսի հայերի նամակի պատասխանը չկայ: Հաւանական է, որ Շոթայակիրը գերադասել է ոչ թէ գրաւոր, այլ՝ գործնական արձագանք տալ նամակի պատգամներին:

Այդ իսկ պատճառով նամակին յաջորդող իրադարձութիւնների նկարագրութիւնը շարունակենք՝ հետևելով հայ Երուսաղէմի պատմութեան հեղինակ Տիգրան Սաւալանեանցին: Վերջինս, անշուշտ, յենուել է վաւերագրերի վրա, նոյնիսկ մէկ-երկու մէջբերում է կատարում Կ. Պոլսի հայերի նամակից, ինչը ցոյց է տալիս, որ նրան յայտնի է եղել նամակի բնագիրը:

“Երանաշնորհի պատրիարքը,- գրում է Տ. Սաւալանեանցը,- չի համարձակիր այլևս դէմ կենալ այդ աղերսանքին, սիրտը կը շարժի, լալով կը համբուրէ շղթան ու կը հանէ վիզէն: Բայց առով աւելի կը զօրանայ իր մէջ Ս. Աթոռին հանդէպ զգացած անօրինակ սէրը, գոր կը պահէ մինչև մահ ու կը շարունակէ իր հայրական հոգածութիւնը՝ մինչև որ իսպառ կ'ազատի Ս. Աթոռը իր հին ու նոր պարտքերէն: Կը տեսնենք արդարև, որ յաջորդ տարին (1728) տոկոսներով միասին կը վճարուի նոր պարտքերն ալ, որոնց գումարը մէկ տարուան ընթացքին 27.764 դահեկանի կը հասնի: Գրիգոր Շոթայակրի կենսագրութիւնը ընդդ Յիշատակարանը կը գրէ, թէ անկա չէր բազմած տակաւին Տեառնեղբօր Աթոռին վրայ: Շոթան վիզէն հանելէն ետք է որ երկու եպիսկոպոսներ թևերը մտնելով Առաքելական Աթոռին վրայ կը բարձրացնեն, ու այդ օրը շատ մեծ ուրախութիւն կ'ըլլայ միաբանութեան մէջ”:(3)

* * *

Մի քանի նկատառում՝ ժամանակի հայ հոգևոր և աշխարհիկ երեւելիներին ի մի հաւաքած պատմական նամակի լեզուի մասին: Նամակն այս ժանրի գլուխգործոցներից է՝ բովանդակութեամբ ու լեզուական առումով: Նամակը, իբրև գրական ստեղծագործութիւն, մի պոռթկում է կարծես՝ տարիներ շարունակ կուտակուած, քննարկուած խնդրին ի վերջոյ լուծում տալու համար: Այդ տրամադրութիւնը զգացում է բազմաթիւ հատուածներում, ինչպէս՝ “Բաւական լիցի տառապանդ և գմեզ տառապեցուցանելդ, ո՞ գերապատիւ: Շա՛տ լիցի քեզ տապիչդ և մեզ համբերելս”:

“Չնեղութիւն դու կրես, բայց զնախատինսն՝ մեք”:

“Դու նահատակ, մեք՝ սպանողք, խիստ լաւ, բարոք վարձու արժան առնես զաշխատողքս”:

“Թէ զաղաչանս զայս անտես առնիցես, ծանուցեալ լինիս, թէ ի գուր սիրես զմեզ”:

Նամակի հեղինակը (կամ հեղինակ-

ները) կատարեալ տիրապետել է մեր լեզուին ու մատենագրական ժառանգութեանը: Որտեղ պէտք է՝ նամակը գրուած է կանոնաւոր գրաբարով, որտեղ պէտք է՝ խօսակցական ու սրտամօտ հատուածներով, որտեղ պէտք է՝ ներկայացուած են յստակ ու հատու փաստարկներ՝ անգամ երկաթեայ կամք ունեցող Գրիգոր Պատրիարքին դիմելու և համոզել կարողանալու համար: Եվ վստահ կարելի է ասել, որ նամակը հասել է իր նպատակին, այնքան որ ունի՝ ներգործող ուժ, ունի համոզող և անժխտելի կոտ տրամաբանութիւն:

Նամակն օժտուած է գեղարուեստական մեծ արժէքով: Այստեղ կարելի է հանդիպել բառակրկնութիւնների միջոցով ստեղծուած պատկերների, ինչպէս՝ «մի՛ և մի՛ բնա լիցի հոգ հոգարկու հոգոյոյ», «աղաչեմք, աղաչեմք և բիրիցս աղաչեմք», «գի գիտեն, որ գիտենն»:


Չգալի թիւ են կազմում նորակազմ բառերը, որոնք ցոյց են տալիս հեղինակի լեզուական հմտութիւնը՝ «լուսաւորչածին երամբ, յօգնութիւն առժամանել, գիր մատանց քոց անբացիկ, շնորհաշար բան, լուսասահման փրկութեանագործ վայրացդ, հոգեկիցն քո նոյնավիշտ, ո՛վ գերամեծար, տեսիլ երկնահոտ», և այլն:

Նամակի լեզուն գրաբարն է, որոշ՝ ոչ առատ աշխարհաբարեան արտայայտութիւններով, ինչպէս՝ «նաւ...պահուցն Երկուշաբթին կելանէ», «զվմասն չի վճարեր», «ահա ես քսակէս հազար դուրուշ *իմտատիէ* տամ», «հերիք նախատակոծ եղաք»:

Գործածուած են մի քանի փոխառեալ բառեր, որոնք իր ժամանակին համագործածական կարող էին լինել՝ *իմտատիէ*, *տէրէ*, *մուրախս*, *վէրիլ*, *դայրէք*:

Երկու խօսք՝ նամակի հնարաւոր հեղինակի մասին: Պէտք է ասել, որ նման բնագիր գրողն իր դիրքով Գրիգոր Շոթայակրից պակաս մէկը չէր կարող լինել: Խիստ հակուած ենք տեսնելու Յովհաննէս Կոլոտ պատրիարքի եթէ ոչ անմիջական ձեռագիրը, ապա առնուազն գործօն միջամտութիւնը նամակը գրելիս: Այդ նա՝ է, որ գործունեութեամբ քաջածանօթ էր Երուսաղէմի իրավիճակին և ողջ էութեամբ կապուած՝ եղբայրակից ու արքունակից Գրիգոր Պատրիարքին: Անմիջականօրէն Յովհաննէս Կոլոտին է առնչուում այն հնարաւոր ամօթանքը, որ կրում էին հայերը իրենց պատրիարքին շոթայակապ պահելու (թէկուզ ինքնակամ) և ազատել չկարողանալու

համար: Կարապետ Ուլնեցի կաթողիկոսի Կ.Պոլսում լինելու պարագան էլ անշուշտ նոր ու լրացուցիչ ազդակ է դարձել Պատրիարքի «շոթաների» հարցն ի վերջոյ լուծելու համար:



Գրիգոր Շոթայակրի շիրմաքարը

* * *

Գրիգոր Շոթայակրին հասցեագրած՝ Կ.Պոլսի հայերի նամակի պատճենը պահպանուել է Մաշտոցեան Մատենադարանի թ. 9142 ձեռագրում: Այն հաստ կազմով մեծ տետր է, որ ամփոփում է «Ճանապարհորդութիւն Ստեփանոսի Զ. Սուրենեանց ի Տաճկաստան և ստորագրութիւն Երուսաղէմի» երկը: Ինչպէս ձեռագրի տիտղոսաբերքն է վկայում, ողեգրական այս երկը գրուել է 1864 թուականին, հեղինակի՝ Ստեփանոս Սուրենեանց եպիսկոպոսի ձեռքով: (4)

Այս ձեռագիր տետրի վերջում՝ 103-րդ թերթից յետոյ կարուած են հիմնական տետրի էջերից աւելի փոքր թղթեր՝ թվով 3-ը, որոնք կազմում են ձեռագրի 104-105-106-րդ թերթերը: Այդ էջերին էլ արտագրուել և պահպանուել է 1728 թուականի նամակի պատճենը: Դժուար չէ

ենթադրել (չնայած որ այդ մասին ոչ մի ակնարկ չկայ ձեռագրում), որ նամակն ընդօրինակուել է Երուսաղէմի գրապահոցներում եղած բնագիր նամակից՝ Ստեփանոս Սուրենեանցի պատուէրով:

Նամակի պատճենի առաջին էջի (104ա) վերին մասում արտագրուած է Կարապետ Բ. Ուլենցի Կաթողիկոսի հաստատագիրը. “Ես՝ Կարապետ Կաթողիկոս համակամ և միաբան եմ օրհնեալ իշխանացս Հայոց”:

Այս հաւաստագրին յաջորդում է խորագիրը, որ անշուշտ գրիչինն է, որին էլ հետևում է նամակի բուն շարադրանքը:

Ստորև ներկայացնում ենք 1728թ. պատմական նամակն ամբողջութեամբ: Կետադրութիւնը կատարուել է մեր կողմից, որոշ անուանումների մեծատառերով գրութիւնը (սուրբ Աբող, Հայրապետ և այլն) պահպանել ենք, ինչպէս բնագրում է: Ձեռագրում գեղչուած տառերը, կրճատ գրութիւնները վերականգնել ենք:

* * *

“Օրինակ և ճիշտ գաղափար նամակին՝ ուրսուն և չորս կնքով եկեալ ի Կոստանդնուպօլսոյ ի սուրբ Երուսաղէմ առ Գրիգոր Շղթայակիր Պատրիարք սրբոյ Աբողոյս:

Ամենապայծառ և սքանչելագործ Սուրբ տեղեացոյ տնօրինականաց Տեառն մերոյ Քրիստոսի՝ որդւոյն Աստուծոյ. մոխրամած երեսօք յերկիր կցեալ պատկառանօք գերամաքուր քարանց և հողոյ, որ ի դմա կան սրբութեանցն, այսինքն՝ քահանայք, իշխանք, գանձակայք, եկեղեցականք և աշխարհականք և մանաւանդ աստ համահաւաք լուսաւորչածին երամբ՝ հանդերձ հարք մերով և որդեկաւ քով և հոգեւոր առաջնորդաւ Յօհաննէս Աստուածաբան վարդապետին: Որք և զշնորհագարդ սուրբ Հայրապետ և գլոյժ բաղձալի հայրդ մեր բազմավիշտ աջահամբոյր փափաքանօք ողջունելով զորպիսութիւն ցաւագնեալ ծնողիդ մերոյ, իբր ի նոյն շնչոյ հարցանեմք և զօրհնութիւն գերամաքուր աղօթից քոյ մեզ յօգնութիւն առժամանել միշտ աղերսեմք և հայցեմք:

Ծանիցէ քոյին վսեմութեանդ, հայր Սուրբ, զի գիր աստուածամերձ մատանց քոց եհաս առ մեզ անբացիկ և ըստ հրամանի քոյին սրբութեանդ բացեալ ընթերցաք ի լուր ամենեցունցս և ծանեաք, զոր ի նմայն շնորհաշար բանսն: Եւ գրեալ էիր Հայրդ մեր գլխաւոր օրէն գերեք բանս զայսոսիկ. մէկ՝ թէ իմտատիէ(5) խնդրէ ի

ձէնջ Սուրբ տունս. երկու՝ թէ ելանեմ և յայլ կողմունս գնամ Սուրբ տանս աղագաւ. և երեք, թէ՝ զուխտաւորսն յորդորեսցիք. վասնորոյ գրեցաք ահա զոր բարութն վարկաք: Գիտէ Հայրդ մեր, թէ արեւելեան տանն(6) աւերումն ամենայն կողմանց վիշտ և ցաւ տարածեաց, զի ոչ գոյ տեղի, յորում գերեաց խղճութիւն չիցէ երեւեալ ազգս հայոց ի պատճառս այնց գերեացն, որպէս քաջայայտ է քոյին հայրութեանդ, զոր գրելն յերկարութիւն է: Ձի ի գրոյ և ի լոյ յականջս ամենեցուն հասեալ կայ. Տէր ինքն հոգացէ Հօրդ մերոյ մաղթանօքն: Եւ սիրոյ այսպէս լինելոյ ասա դու մեզ, Հայր, լինիցի՞՞ օգուտ ինչ Սրբոյ տանդ այսպիսի ժամանակի ելանելն քո ի շրջագայումն, ոչ բնաւին, որպէս յայտ է ամենեցուն իբր ստոյգ գիտացեալ իր: Թագերուք, ասէ, ընդ յարկաւ ձերով, զի ժամանակ մի եւս մնալով այցելութեանն Աստուծոյ: Ձի թէ ելցես, կարծեմք և գիտեմք իսկ, ի շահէն զվնասն չի վճարեր: Բարերար է Աստուած ի վերայ համբերողաց՝ ակնկալեալ ողորմութեամբ նորա՝ չունիմք արմատ բնաւին յուսահատութեան: Ձի ոչ յաւիտեան մերժէ Տէր զժողովուրդ իւր, զոր յառաջն ծանեալ: Վասնորոյ յայցելութեանն, յորում այց արասցէ Տէր և թերեացուցէ ի մէնջ, թերևս սակաւ ինչ կամ բնաւին ըստ իւր անքննելի դատաստանին և գթոյն գնեղութիւն գերեացս, յայնժամ շունչ առեալ սակաւ ինչ կամօք և կարողութեամբ նոյն ինքն Աստուծոյ հոգւով և մարմնով տալոց եմք զիմտաւորչէն ըստ մերս կարեաց և անդր իսկ: Ձի ըստ մեծութեան Աստուծոյ և զբարերարիչն գիտեմք լինել:

Իսկ յորդորումն ուխտաւորաց մի՛ և մի՛ բնաւ լիցի հոգ հոգարկու հոգւոյդ, զի ահա հայրս մեր և առաջնորդ հոգեկիցն քո և նոյնավիշտ միշտ ի նոյն ջան և ի նոյն տքնութեան կայ իւրայնովն ամենեքեամբք և ոչ միայն նա, այլ և ամենայն աստեայքս գիտէ Հայրդ մեր, որ ան ի բաց դնելի (7) ունիմք զհոգ Սրբոյ տանդ ի սրտէ, Աստուծով քարոզեմք ամենքս իւրաքանչիւր ըստ կարեաց: Եւ մանաւանդ իսկ սրբազան վեհս մեր նորապսակն (8), որ այժմ իսկ աստ է, յորդորէ միշտ զժողովուրդ իւր:

Եւ ահա յայսմ ամի Աստուծով առատ և ընչաւեւք և տրասեքք են ուխտաւորքն, և գիր գնաց յամենայն կողմունս, թէ՝ շուտով պարտիք շարժիլ, զի նաւն Աստուծով յԱստուածամօր պահուցն երկուշաբթին կեւանէ, տէրէ որ հոգայ

և մեզ հոգալ տայ: Եւ զկնի այսր ամենայնի, ներել ժտելով մեծի սիրոյ համարձակութեան համայն վերոյ գրեցեալ ծառայիցս քոց, յու՛շ առնեմք Հօրդ մերոյ՝ չասել մեծի մարգարէին յորդորական բանիւ, թէ՛ «քահանայքդ խօսեցարոք ի սիրտ Երուսաղէմի» եւն (9): Ո՞ւրդեօք այժմ իմացի յոգնաբախիծ սգով վարանեալ սիրտն Սաղիմայ, եթէ ոչ սրբոյ վեհիդ վշտակիր անձն: Առ որ ահա քահանայք և աշակերտք նորոյս կտակի աստէն այժմ աստ գտեալ ի հանդերձ միաբան ժողովուրդքս՝ խօսին զսփոփանս, որ լի եղեր տառապանօք և տրտմութեամբ և յերկար տաժանեցար ի կապանսդ և ասեմք՝ բաւական լիցի տառապանդ և զմեզ տառապեցուցանելդ, ո՞ր գերապատիւ: Շա՛տ լիցի քեզ տապիլդ և մեզ համբերելս: Ժամ է այսուհետև հոգաձու Հօրդ՝ մխիթարիլ և մխիթարել: Սփոփեցի օրինեալ սիրտդ Երուսաղէմի և սփոփեցէ ջիւս և զոսկերս և զայլ մասունս նորին, որպէս զի սրտիդ բերկրեցելոյ երեսք զուարթք երեսեցին: (10) Արդ՝ այն որ զհովիւսն գուշակս արար իւրոյն խորհրդոյն և զաղբատ ձկնորսն քարոզս կենաց, չէ անմարք թէ և այժմ շրթամբք անարգ յետնեցելոցս ասիցէ հոգևոր գործոյն մշակիդ, թէ որ ի կապանս կամ այս ես, ե՛լ, և որ կաս ի միջի տրտմութեան տան իմոյ, յայտնիջի՛ր ի լոյս մխիթարութեան: Ասիցէ թերևս քոյին սրբութիւնդ, թէ զի՞նչ ասեք, ո՞չ ապաքէն մինչ ի վճարիլ Սրբոյ տանս պարտուցն, առի յանձն չելանել ի կապոյ այսր երկաթոյս: Հիրաւի, ո՛վ գերամեծար, բայց երկուս ինչ ունիմք ասել. մի՛ զի զոր ինչ սրբոյ խորհէին ի բարութիւն, խորհրդակցութեամբ ծառայիցս քոց առնէիր, իսկ զայդ կապանացդ իրակութիւն առանց ուրոք զիտելոյ արարեր, զոր կարեմք սիրով, թէ չէր պարտ այդպէս լինիլ, ուստի սակայն խորհեալ և կատարեալ էիր՝ թողաք զվեհդ ի կամս, զի մի՛ դիմակ (11) ցուցցուք զմեզ կամաց քոց:

Բայց շատ ուրեմն լռեցաք, թէ ասես. «Ձեզ ի՞նչ՝ յոր լռեք չլռեք»: Ասեմք, թէպէտ զնեղութիւն դու կրես, բայց զնախատինսն՝ մեր, որովհետև կոչեցեալ է անուն քո ի վերայ մեր, վասնորոյ ունիմք իրաւունս խօսելոյ ի մասինս յայսմիկ. երկու՛ր զի ի սկզբանէ անտի յանձ առնելոյ անձին սրբոյդ զայդ ի սուրբ տանդ, այսինքն թէ սպասուց ոմանց ազատութիւնքն և նորեկ յիշատակքն և մանաւանդ թէ շնորհալի շինուածոյն ծախքն, այստքիկ ամենայնքն թէ պարտուց տուեալ լինէին, զիտէ Հայրութիւնդ,

թէ ստուգապէս վճարեալ լինէին բովանդակքն: Համարեա՛ ուրեմն, թէ վճարեցան հին պարտքն և լցան ուխտքն քո, և վերստին նոր եղեն պարտք մնացեալդ սակս վերոյ գրեցեալ պայծառութեան Սրբոյ տանդ շինուածոյ: Որպէս ահա գոհութիւն ամենատեառն, յաւելումն և յաճումն է օր ըստ օրէ շքեղազարդ պայծառութիւն գովելի յարկիդ, շնորհիւ Տեառն: Եւ ո՞ր գիտէ, ասես դարձեալ թերևս, ես մինչ զՍուրբ տունս ո՛չ տեսանիցեմ ազատեալ ի բնաւին պարտուցն, ոչ հանից գերկաթս, եթէ ոչ՝ մեռայց ի սմին: Բարոք է պարծանքդ ի մեր նախատինս, զի ցուցանի յայտնապէս, թէ քիչ պարծանս և մեզ մեծ նախատինս անջնջելի կամիս արձանագրել յազգաց յազգս, ասելով թէ՛ տըքա այնք են, որք զառաջնորդ մի ի ներ երկաթոյ թողեալ՝ նովին սպանին: Դու նահատակ, մեր՝ սպանողք, խիստ լաւ, բարոք վարձու արժան առնես զաշխատողքս: Բայց քա՛ւ լիցի մտածել կամ ասել քեզ զայդ Հօրդ խոհեմագունի: Վասնորոյ ահա ստորագրեցեալ ծառայքս ամենեքեան մեծաւ աղերսիւ և յուսով իսկ խնդրեմք ի քոյին սրբութենդ՝ լսել նուաստիցս աղաչանաց և հանել զպարանոց պատուականիդ ի կապանացդ երկաթոյ:

Ի սէրն Աստուծոյ լինի, Հայր սուրբ, զսուրբ Ձերթեանս և զսուրբն Յակոբ բարեխօս առ քեզ ունիմք, արա հայցեմքս. հերիք նախատակոծ եղաք այլոց: Խնայեա՛ զազգին քո անուն, լուիցես մեզ և լուիցէ քեզ Տէր, և մեր՝ ծառայքս քո: Չի լսողին լսել իրաւունք են, որպէս և միւսն, և մի՛ լիցի ընթերցելով ձգիցիս ի վայր զայլ ինչ գրել կամելով պատճառս առ մեզ, մի՛ աշխատիցիս ունայն, անհնար է, որ պիտի այս մէկ խնդիրքս ի կատարումն գայ: Որպէս և մեր միշտ կամք և եմք ծառայքս պատրաստական քոյին հայրութեանդ և մանաւանդ տեղւոյդ առ ի կատարել, զոր ինչ հրամայիցես: Ուստի աղաչեմք, աղաչեմք և բիւրիցս աղաչեմք, զի մի՛ գուցէ և մեզ՝ ծառայիցս լքումն ի ջերմաջերմ առաջադիմութենէս լինիցի, և ո՛չ ի մենջ պատճառեալ:

Վերջացուցանելով զբանս ասեմք, անպատճառ լսելով մերս աղերսանաց պարտիս ի հարկաւորութենէ, որ առ մեզ սիրոյդ, հանել զկապանսդ իսկոյն ի հասանել աղերսանացս և ի վերայ կերակրոյդ, իբր պտուղ զմեզ և զսուրբ տունդ սիրելոյդ ըմպել սակաւ ինչ զինի ջրախառն ըստ պատուիրելոյ աստուածայնոյն Պօղոսի: Եւ թէ զաղաչանս զայս անտես առնիցես, ծանուցեալ լինիս, թէ ի զոր սիրես

գմեգ: Այլ ուրիշ բանից և պատճառաց ո՛չ լսեմք, թէ և արդար իսկ իցէ: Եթէ իսկապէս զօգուտ Սրբոյ տանդ խոկայցես, տալ պարտիս սակաւ ինչ և բնութեանդ թոյլ. և ո՛չ յոյժ ճնշելի վեր բան գիարկն, զգիարդն դու իմա՛, որ յայտ իսկ է, և հետեւելն վնաս անձինդ սրբոյ և տանդ սրբոյ, զոր ոչ խնդրէ տէր, ուստի և ո՛չ հաճի, ապա և դիմակ գտանի *մութլախ* (12) կապակցութիւն, որ առ մեզ սիրոյդ զայս խնդիրս գիտեմք: Բայց արդ՝ մինչ յայսմ խորհրդի էաք և խոկայաք, լուաք թէ հոգեծինն հարազատ սրբոյ Հօրդ մերոյ *վերիլ* (13) Յովհաննէս վարդապետն գալոց է ի մօտ ատուրս ընդ ուխտատուրացն: Եւ սակաւ ինչ զկնի ընկալաք տեսեամք, զոր լաքն ունկամք. այս է գսիրելին քո և զնեցուկն ծերութեանդ ըստ քոյին շնորհազարդ գրոյ: Յոր յայեցեալ մարմնոյ աչաց ըզձանօք լցաք բերկրանօք և անպատում խնդութեամք, իբր ստուգիւ զամենաբաղձալի տեսիլ սրբոյ Հօրդ իմն իսկ տեսանելով. վայելեցաք արդարեւ ի քաղցրաձաղիկ ծառոյդ զբարետիպ պտուղն՝ յինքեան զՀօրդ սրբոյ ունելով զպայծառ վարուցն կերպարան: Որ և զօրինութիւն ամենագեղեցիկ սուրբ վայրացոյ և զաղօթիցն ձեր երանաշնորհի սուրբ Հայրապետիդ՝ հեղեալ ի վերայ մեր իբր զօրձանս յորդ գետոյ, զարթոյց անդրէն զկարօտ անձկութեան մերոյ առ տեսիլ երկնահոտ տեղեացոյ, և գեղոյ դիմաց պատուեալ պատկերի գերամաքուր ծնողիդ:

Ապա յետ սակաւուց որպէս և գրեալ էր սուրբ Հայրդ մեր ամենայնիւ ըստ նոյն օրինակի, կամօք և հաւանութեամբ սիրելի որդւոյ քոյ և Հօր մերոյ՝ դիտողի մեծի սրբազան Հայրապետիս մերոյ... (14) ընկալաւ զպարկեշտ պատիւ եպիսկոպոսութեան ի վերոյ գրեցեալ պատուելի սուրբ Հօրէն մերմէ ի սպասաւորութիւն սրբոյ գահիդ և մեծապայծառ Աթոռոյդ ամենայն Հայոց, հանդերձ երկու հարազատօքն իւրովի, այս է՝ Թովմաս և Յակոբ վարդապետօքն, որոց շնորհաւոր եղիցի սուրբ Հօրդ աղօթիւք, մատոյց մանաւանդ և սրբազան վեհիս մերոյ՝ զանպատմելի զանձն աստուածային, զվկայն կեցուցիչ մահուանն Յիսուսի, զսուրբ նշանն տիրական զընծայեցեալն ի սուրբ Հօրէդ, զոր ընկալեալ սուրբ Հայրապետիս մերոյ՝ ծանոյց մեզ ամենեցուն և աղաչեաց իսկ՝ թէ օգնիցէք սրբոյ տանն այնմիկ և ինքնական կապեալ հովուին նորին՝ սիրելի եղբօրս մերոյ. շա՛տ լիցի, ասէ, զոր ցաւեացն, եկայք մխիթար լիցուք մեծի տրտմութեան նորին: Եւ այսպիսի բանիւք ծանուցումն

առնելով ասաց. “Ահա ես քակէս հազար դուրոշ *խմտատիէ* տամ սուրբ տանն դատաստանի և այսուհետև *դայրէքն* (15) ձեր է”:

Վասնորոյ և մեր շարժեալ ի նախկին և ի սոյն փութոյ, և մանաւանդ ի ներշնչմանէ հոգւոյն Աստուծոյ, ընծայեցաք սակաւ ինչ արդիւնս յարդեանց մերոց ի թեթևութիւն պարտուց սրբոյ տաճարիդ Աստուծոյ և ի լուծումն կապանաց Հօրդ մերոյ յերկար տառապելոյ: Որ և ահա ձեռամբ հարազատի քոյ տեառն Յովհաննէս եպիսկոպոսի և հիի (°) Կարապետիւն հանդերձ միւս մահտեսուքն առաքեցաք ի սուրբ Աթոռդ խմտատիէ ընդամենն հինգ հազար դուրոշ: Եւ աղաչեմք յոյժ, զի մի՛ ի քանակն, այլ յորակն հայեցեսիս, քանզի յայսմ ամի մէկ փողն որպէս թէ տասն է համարելի. զգիարդն լռեմք և յայտ է: Չի գիտեն, որ գիտենն, և պատմեն արդեօք սուրբ Հօրդ: Եւ որ ինչ մնացուածք պարտուցն մնայցեն, զայն եւս ի մեր վերայ իմա՛, միայն թէ զայս Բ խնդիրս մեր կատարիցես, այս է՝ զհանել երկաթոյդ և զջուր եւեթ ոչ ըմպել:

Եւ որպէս ի վերոյ եղաք, նշան սիրոյ քո առ մեզ և առ սուրբ Հայրապետս մեր և առ բազմաջան որդեակ քո՝ զայս խնդիրս գիտեմք և ոչ զայլ ինչ: Եւ մնամք աւասիկ լոյս կատարման: Եւ ողջ լեր բաւական բազմաց օգտութեան բարեշնորհ կեցութեամբ. ամէն:

Առ միահաղոյն պաշտօնեայոջ սուրբ և լուսասահման փրկութեանագործ վայրացոյ, զսոյն աղերս բազմաւ կրկնելով հայցեմք, զի հարկ եղեալ ամենեքեանդ մեծապէս ժողովման խնդրեսցիք զսոյն խնդիրս մեր ի Հօրէն մերմէ: Մի՛ վերջասցիք և մի՛ յօր յօր ձգեսցիք: Այլ իսկոյն ի գալ գրոյս՝ ջանն ձեր մեծ այս լիցի, զի համօրէն զայս խնդրիցէք և ո՛չ դադարեսցիք մինչև կատարեսցէ զխնդիրսդ, և յուսամք ահա ի ձեզ՝ զայս հարկ սիրոյ կատարել, եթէ սիրէք զԱստուած և զմեզ: Եւ ահա մանաւանդ նորապսակ (16) ... ամենայն Հայոց սուրբ Հայրս մեր աստ գոլով, նա եւս մեծ հարկաւորութեամբ խնդրէ զայս՝ իցէ՞ արդեօք ընդդէմ կալ առաքելական հրամանին եւս: Եւ մնամք աւասիկ գրոյ և լոյս՝ թէ եղև զոր խնդրեցիքն: Եւ բաւ է: Ռ՜ճ՜է, օգոստոսի Ժ՜Զ”:

SUMMARY

NORAYR POGHOSYAN. -At the beginning of the 18th century the Patriarchate compiled a lot of debts. In 1715 new Patriarch was elected Grigor Shirvantsi. Who put iron chain

around his neck in 1718 and covenanted not to take it off until the debts were completely repaid. A lot of donations were made, main part of debts was repaid, but Grigor didn't hurry to take the chains off. In 1728 outstanding Armenians from Constantinople wrote a letter to the Patriarch and asked him to take the iron chain off his neck to free himself from the heavy burden and the Armenians from dispraise.

Present article is devoted to that historical letter, which is the masterpiece of the genre. First the writing circumstances of the letter are presented, then the language. The whole letter taken from Yerevan Repository of Manuscripts, from script 9142, is also published.

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(1) «Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց», կազմեց Նորայր արք. Պողարեան, հտ.

(2) «Սիոն», 1971, ք. 9-10, էջ 358:

(3) Տիգրան Սաալանեանց, Պատմութիւն Երուսաղէմի, հտ. 2, գրաբար քննագրից աշխարհաբարի վերածեց Մեսրոպ Նապ. Նշանեան, Երուսաղէմ, 1931, էջ 698:

(4) Առհասարակ Երուսաղէմեան հայերէն ձեռագրերի մէջ դեռևս կարելի է գտնել անտիպ պատմութիւններ, որոնց հեղինակներն են Սուրբ Վայրերը ուխտի եկած հայ հոգեւորականները, ճանապարհորդները, ստեղծագործողները: Կրօնք առանձին քննութեան և ինչու չէ՝ հրատարակութեան կարիք ունեն:

(5) Իմտատիւ - բուրք, նպաստ, օգնութիւն:

(6) Արեւելեան տուն ասելով նկատի ունի բուն Հայաստանը:

(7) Բնագրում գրուած է այդպէս՝ «ան ի բաց դնելի»:

(8) Նորապսակ ասելով ակնարկում է Կարապետ Բ. Ուլենցի Ամենայն Հայոց Կաթողիկոսին, որ 1728 թ. ամռանը եղել է Կ. Պոլսում:

(9) Հմմտ. Եսայի, Խ. 2 - «Քահանայք խօսեցարուք ի սիրտ Երուսաղէմի եւ մխիթարեցէք զդա, զի լի եղև տառապանք»:

(10) Բնագրում՝ «երեւցուր», ուղղում ենք ըստ իմաստի:

(11) Դիմակ - այստեղ՝ հակառակութիւն:

(12) Մուրլախ - բուրք. անպատճառ:

(13) Արիւ - բուրք. փոխանորդ, լիազօր ներկայացուցիչ: Այստեղ նկարագրուած «Հոգեծին, հարազատ վերի Յովհաննէս վարդապետն» անշուշտ Յովհաննէս Հաննան է, որ այդ օրերին Կ. Պոլիս էր այցելել կաթողիկոսից եպիսկոպոսական աստիճան ստանալու համար:

(14) Արտագրողն այստեղ կէտեր է դրել և ինչ-ինչ պատճառով զեղչել է կաթողիկոսի անունը:

(15) Կայրէք - բուրք. ջանք, եռանդ, այստեղ՝ նախաձեռնութիւն:

(16) Այստեղ նոյնպէս կէտեր են զեղչելով կաթողիկոսի անունը:



Մուշի Ս. Կարապետ



Պիթիս կամ Բաղէշ



Հին Կարինը (Երզրում)



Արաբկիր, Ս. Աստուածաբն

